

U  $\frac{11}{1492}$

## ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԽԱՆԴԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ ՌԱՖԻԿԻ

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
(ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ԺԲ. 00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական  
և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ  
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

### ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2016

---

## РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ХАНДАНЯН ГАГИК РАФИКОВИЧ

СУДЕБНАЯ ВЛАСТЬ КАК СОЦИАЛЬНО-ПРАВОВОЙ ИНСТИТУТ  
(ОБЩЕТЕОРЕТИЧЕСКИЙ АНАЛИЗ)

### АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук  
по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история  
государственных и правовых учений»

Ереван - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ. Ստեփանյան**


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ.Գ. Պետրոսյան**  
իրավաբանական գիտությունների թեկնածու **Խ.Կ. Ղազարյան**

Առաջատար կազմակերպություն՝ «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. մայիսի 14-ին, ժամը 11<sup>00</sup>-ին. Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՎ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փ., 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2016թ. ապրիլի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանության գիտությունների թեկնածու՝  **Հ.Կ. Հաչրապետյան**

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **О.М. Степанян**


Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Р.Г. Петросян**  
кандидат юридических наук **Х.К. Казарян**


Ведущая организация: Академия образовательного комплекса Полиции РА

Защита состоится 14 мая 2016г. в 11<sup>00</sup> часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (адрес: 0051 г.Ереван, ул. Овсепя Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 13 апреля 2016г.

 11-1491

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук  **Дж.А. Айрапетян**

### Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

**Հետազոտման թեմայի արդիականությունը:** Խորհրդային շրջանում մարքսիզմն իրեն հատուկ՝ պետության, որպես դասակարգային բռնության ապարատի պարադիգմայով հասարակության մեջ ուսուցանվել է կրոնի մակարդակով, իսկ դատարանը դիտվում էր ընդամենը ողջ վարչաիրամայական համակարգի գործիքներից մեկը: Այդ իսկ պատճառով դատական իշխանությունը որպես տարաբնույթ սոցիալական վեճերի լուծման անկախ և ինքնուրույն պետական մարմինների համակարգ, գիտական առաջնահերթ հետազոտությունների թվի չի դասվել: Ավելին՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգի գաղափարական մերժման պայմաններում գիտնականներին ամբողջովին զրկում էր դատարանի անկախ և ինքնավար բնույթը, հասարակական զարգացման մեջ նրա նշանակությունը ճիշտ որոշելու հնարավորությունից:

Այդ պատճառով զարմանալի չէ, որ մեզանում արմատական փոփոխությունների ժամանակաշրջանում՝ իրավագիտությունը երրորդ հազարամյակ մտավ առանց պետական իշխանության մասին անհրաժեշտ տեսական գիտելիքների ընդհանրապես, և՛ դատական իշխանության մասին մասնավորապես:

Այս պարագայում դատական համակարգի բարեփոխողները ստիպված էին սահմանափակվել այլ երկրներում փորձարկված օրենսդրության հապճեպ պատճենահանմամբ, դատական կորպուսի թվաքանակի ավելացմամբ և նրա նյութատեխնիկական բազայի մասամբ ապահովման ամրապնդմամբ:

Ազգային դատական իշխանության իդեալականից բավականին հեռու լինելու պատճառները շատ են, սակայն դրանց հիերարխիայում հատուկ տեղ է զբաղում դատական իշխանության մասին ընդհանուր գիտական հիմնարար գիտելիքների պակասը:

Գիտական և մասնագիտական իրավագիտակցության մեջ տիրում է այն մտայնությունը, որ դատական իշխանության մասին մոտեցումները կարիք ունեն ոչ միայն վերաիմաստավորման, այլև համակողմանի վերլուծության:

Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ առանց համապատասխան ընդհանուր տեսական բազայի, դատական իշխանության հիմնախնդիրների բացահայտումը և դրանց համարժեք լուծումն անհնար է:

Դատական իշխանության հիմնախնդրի հանդեպ հետաքրքրության օբյեկտիվ պատճառներն են մեզանում տեղի ունեցող արմատական փոփոխությունները, որոնց կառավարումը պահանջում է իշխանության, այդ թվում և դատական իշխանության, սկզբունքորեն նոր մոտեցումներ: Արմատական փոփոխությունները տնտեսական, սոցիալ-քաղաքական և իրավական համակարգերում անխուսափելիորեն հանգեցնում են դատական իշխանության էության նորովի իմաստավորման և արժևորման հարցադրումներին:

2012թ. հունիսի 30-ի ՀՀ նախագահի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների» ռազմավարական ծրագրում նշված է, որ «իրավական և դատական

բարեփոխումների առաջնահերթ խնդիրն արդար և արդյունավետ դատական իշխանության կայացումն էր»:

Հիմնախնդրի գիտական հետազոտության արդիականությունը պայմանավորված է 2015թ. ՀՀ սահմանադրական բարեփոխումներով<sup>1</sup>, որում կարևորվում է նաև դատական իշխանության համակարգի և գործունեության արդյունավետության բարձրացման հետ կապված հարցերը:

Դատական իշխանության հիմնախնդրի հանդեպ ունեցած հետաքրքրության սուբյեկտիվ պատճառներն են՝ հասարակության մեջ տարածվող այն վտանգավոր կարծրատիպը, որը դատական իշխանությունը նույնացնում է դատարանի, դատական համակարգի, իսկ երբեմն նաև դատավորի անձի հետ: Այնինչ դատավորները սուսկ դատական իշխանության պոտենցիալ կրողներն են, իսկ դատարանները որպես պետական իշխանության մարմիններ, պարտավոր են ճիշտ արդարադատություն իրականացնել՝ հիմնված իրավունքի և արդարության վրա: Դատավորներն ընդամենը ստանում են դատական իշխանության համակարգի վրա ազդելու իրավունք, որի պատճառով նրանց մոտ էլ ձևավորվում են բարդ և բազմապլան հարաբերություններ:

Հետազոտության ընտրված թեմայի արդիականության մասին վկայում է նաև այն, որ իրավագիտությունը ներկայումս նոր-նոր է ամբողջ խորությամբ, բարդությամբ և բազմակողմանիությամբ մոտենում դատական իշխանության, որպես սոցիալ-իրավական երևույթի հասկացությանը: Հարկ է համաձայնել Մ. Ն. Մարչենկոյի այն կարծիքի հետ, որ «դատական իշխանության չլուծված հարցերի շարքում ներկայումս նախկինի պես մնում են հարցեր, որոնք վերաբերում են դատական իշխանության ընդհանուր հասկացությանը, նրա իրավաբանական բնույթի բնութագրմանը, դատական իշխանության՝ որպես սեռային երևույթի համապատասխան հատկանիշների և գծերի հասկացությանը, պետական իշխանության այլ ճյուղերի հետ դատական իշխանության ունեցած փոխհարաբերությունների բնույթը և առանձնահատկությունները բնութագրող հարցերին»:

Պետական, այդ թվում նաև դատական իշխանության ոլորտում բացահայտումները հետաքրքրում են հասարակության անդամներին, սոցիալական խմբերին ու շերտերին: Առանց որևէ չափազանցության, կարելի է պնդել, որ դատական իշխանության «օրգանիզմի» գիտական հետազոտությունը որոշակիորեն կնպաստի վերոնշյալ ռազմավարական ծրագրի դրույթների իրականացմանը:

Վերոնշյալում է պայմանավորված թեմայի հետազոտության արդիականությունը, գիտական և գործնական նշանակությունը:

**Թեմայի գիտական հետազոտության վիճակը:** Խորհրդային շրջանում դատարանի և արդարադատության հիմնահարցերի հետազոտություններով զբաղվել են Ա. Յա. Վիշինսկին, Մ. Ա. Ստրոգովիչը, Մ. Բ. Կոժեվնիկովը, Ա. Դ. Կոկարևը, Մ. Ի. Չեցով-Բեբուտովը և շատ այլ գիտնականներ: Թեև այդ

ժամանակվա տեսաբանները ճանաչման յուրաքանչյուր օբյեկտ դիտում էին բացառապես պետության մասին մարքս-լենինյան ուսմունքի պրիզմայով, սակայն դրանցից շատերը կարողացել են ընդհուպ մոտենալ դատական իշխանության էության որոշ առումների ճիշտ ըմբռնմանը: Այս առումով միանգամայն հասկանալի պատճառներով դատական իշխանությունը՝ որպես պետական իշխանության ինքնուրույն և անկախ ճյուղ, նրանց կողմից չառանձնացվեց և համալիր կերպով չհետազոտվեց:

Դատական իշխանության՝ որպես ինքնավար սոցիալ-իրավական երևույթի վերլուծությանը անդրադարձել են հայրենական և արտասահմանյան հետևյալ գիտնականները. Դ. Զ. Ավետիսյանը, Ս. Ա. Ավետիսյանը, Գ. Գ. Հարությունյանը, Գ. Ս. Ղազինյանը, Ռ. Գ. Պետրոսյանը, Գ. Բ. Դանիելյանը, Ս. Դիլբանդյանը, Ա. Ս. Ղամբարյանը, Ե. Բ. Աբրոսիմովան, Ս. Ա. Ալեքսեևը, Բ. Վ. Անդրեևը, Բ. Ի. Անիշինան, Գ. Բ. Ատամանչուկը, Պ. Դ. Բարանբոյմը, Բ. Գ. Բեսարբովը, Ա. Դ. Բոյկովը, Ն. Խ. Բոնդարը, Ա. Ա. Վլասովը, Վ. Վ. Վլասովիչ, Լ. Ա. Վոսկրեսնովան, Ս. Ի. Գերասիմովը, Կ. Ֆ. Գուցենկոյը, Ի. Ֆ. Դեմիդովը, Վ. Վ. Երշովը, Ի. Ա. Իսանը, Մ. Ի. Կլեանդրովը, Ա. Ի. Կովալովը, Գ. Բ. Մալցևը, Մ. Ն. Մարչենկոն, Է. Բ. Մելնիկովան, Ի. Բ. Միխայլովսկայան, Ի. Լ. Պետրովսինը, Վ. Ա. Ռժևսկինը, Վ. Պ. Ռյաբցևը, Վ. Մ. Սավիցկի, Ն. Գ. Սալիչևան, Կ. Ֆ. Սկվորցովը, Յու. Ի. Սկուրատովը, Ա. Բ. Սոլովևը, Յա. Ի., Ստեցովսկինը, Ա. Յա. Սուխարևը, Յու. Ա. Տիխոմիրովը, Մ. Ե. Տոկարևայը, Բ. Ս. Էրզեևը, Ն. Յա. Յակուբովիչը և այլք, որոնց աշխատությունները տեսական և մեթոդաբանական բազա են հանդիսացել սույն աշխատանքի համար:

Քննարկվող հիմնախնդրի առումով խիստ կարևորվում են Գ. Ա. Բադիրյանի<sup>2</sup>, Վ. Գ. Վաղարշյանի<sup>3</sup> թեկնածուական ատենախոսությունները՝ դատական իշխանության պատմական, զարգացման հիմնախնդիրներին, ինչպես նաև առանձնահատուկ պետք է ընդգծել Ա. Ա. Ղամբարյանի դոկտորական ատենախոսությունը՝ դատական քաղաքականության վերաբերյալ<sup>4</sup>:

Միևնույն ժամանակ չի կարելի չնկատել, որ դատաիշխանական հարաբերությունները շատ հեղինակների կողմից ընկալվում են, գերազանցապես ինստիտուցիոնալ առումով, օրենսդրությամբ ամրագրված շրջանակներում, ինչի հետևանքով այնպիսի բարդ երևույթը, ինչպիսին է դատական իշխանությունը, ստանում է զուտ նորմատիվային, երբեմն նաև սքոլաստիկ մեկնաբանություն:

Սույն հետազոտության համար տեսական և մեթոդաբանական բնույթի նշանակություն ունեն նաև՝ Ելիզավետա Դանիելյանի, Տիգրան Մուկուչյանի թեկնածուական ատենախոսությունները դատական իշխանության հիմնահարցերի վերաբերյալ:

<sup>2</sup> Տե՛ս Բադիրյան Գ. Ա. Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների համակարգը: Սեղմագիր իրավ. գիտ. թեկ. ատենախոսության: Երևան, 2000:

<sup>3</sup> Տե՛ս Վաղարշյան Ա. Գ. Հայաստանի առաջին Հանրապետության պետական իշխանության համակարգը (1918-1920թթ.): Ատենախոսության իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման: Երևան, 2013:

<sup>4</sup> Տե՛ս Ղամբարյան Ա. Ա. Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (համատեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներ): Սեղմագիր իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան 2012:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Երևան, 2015:

Մանավորապես ելիզավետա Դանիելյանը<sup>5</sup> իր թեկնածուական ատենախոսության մեջ բացահայտել է դատական իշխանության էությունը, ներկայացրել է դատական իշխանության անկախության երաշխիքների համակարգը:

Տիգրան Մուկույանը<sup>6</sup> համակողմանի ներկայացրել է Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների էությունն ու փուլերը, առձանագրված ձեռքբերումները և առկա թերությունները:

Վերը նշված աշխատությունները որոշիչ ազդեցություն են ունեցել ատենախոսության թեմայի ընտրության, դրա օբյեկտի, առարկայի, կառուցվածքի, մեթոդների, նպատակների և ճանաչման խնդիրների որոշման հարցում: Ի տարբերություն նշված թեկնածուական ատենախոսությունների, սույն ատենախոսության մեջ վերլուծվել են նաև դատական իշխանությունը ոչ միայն որպես ինքնուրույն ու անկախ սոցիալ-քաղաքական և պետական իշխանության տարատեսակ, այլև որպես հասարակական առանձնահատուկ հարաբերությունների ամբողջություն, նորույթի տարրեր կան նաև մի շարք այլ դրույթներում: Թեմայի ընտրության հարցում կարևոր դեր է ունեցել նաև այն, որ հեղինակն իր մասնագիտական աշխատանքի բերումով դատական գործունեության սեփական փորձը օգտագործելով զուգակցել է տեսականը՝ պրակտիկայի հետ:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է համալիր ուսումնասիրության ենթարկել դատական իշխանությունը, որպես մարդու սոցիալական բնույթով պայմանավորված հասարակական կապերի և հարաբերությունների համատեքստում, որպես պետական իշխանության մեխանիզմի ինքնուրույն և անկախ տարրի, որպես իրավունքի նորմերի հիման վրա սոցիալական, քաղաքական և տնտեսական կոնֆլիկտների լուծման հատուկ և արդյունավետ միջոցի:

Բացի դրանից հետազոտության նպատակն է նաև պետության և իրավունքի տեսության մեջ դատական իշխանությանը վերաբերող հասկացական-գիտական ապարատի նորացման անհրաժեշտության հիմնավորումը, դատական մարմինների գործունեության կատարելագործմանն ուղղված՝ գիտականորեն հիմնավորված առաջարկությունների և հետևությունների մշակումը:

Նշված նպատակը պայմանավորել է տեսական և կիրառական մի ամբողջ շարք խնդիրների առաջադրումը:

– բացահայտել դատական իշխանության էությունը և նրա սոցիալական բնույթը, նրա տեղը և դերը հասարակության քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում պետական իշխանության համակարգում,

– վերլուծել դատաիրավական հարաբերությունների զարգացման

միջազգային փորձը և դրա օգտագործման հնարավորությունները ազգային դատաիրավական բարեփոխումների ընթացքում,

– ուրվագծել դատական իշխանության և դատական համակարգի հետազգա զարգացման և արդարադատության արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները,

– մշակել գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ՝ դատաիրավական հարաբերությունների իրավական կարգավորման հիմքերի կատարելագործման համար:

Այս առումով, դատական իշխանության վերաբերյալ գիտական հայացքների համակարգի կառուցումը և հիմնավորումը, անշուշտ, ենթադրում է ներքուստ համաձայնեցված և համակարգված տեսական հենքի ստեղծում:

**Հետազոտության օբյեկտը:** Հետազոտման օբյեկտը կանխորոշված է նշված հարցադրումների առանձնահատկությամբ և համալիր բնույթով: Որպես ուսումնասիրման անմիջական օբյեկտ հանդես է գալիս դատական իշխանությունը, այսինքն՝ առանձնահատուկ հասարակական հարաբերությունների այն ամբողջականությունը, որը ծագում է դատարանների կողմից արդարադատության և այլ գործառույթների կատարման կապակցությամբ: Մանրամասն ուսումնասիրվում են նաև դատական իշխանության էությունը և նրա սոցիալական նշանակությունը:

**Հետազոտման առարկան** է ՀՀ դատական իշխանության մարմինների համակարգը, դրա կատարելագործման և արդյունավետության բանձրացման հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքն** են կազմում գիտական ճանաչողության բազմատեսակ եղանակների զինանոցը:

Այս առումով հետազոտության ընթացքում լայնորեն օգտագործվել են ինչպես ընդհանուր փիլիսոփայական - աշխարհայացքային մեթոդները՝ համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, տրամաբանական հնարքներն ու եղանակները, այնպես էլ հատուկ կամ մասնավոր՝ իրավահամեմատական, համակարգային - կառուցվածքային վերլուծության, իրավաբանական վերլուծության, համադրման և համեմատական վերլուծության, պատմատեսական վերլուծության մեթոդները:

**Հետազոտության փորձարարական (էմպիրիկ) բազա** է հանդիսացել համապատասխան իրավական և դատական այդ թվում՝ հեղինակի իրավակիրառման սեփական պրակտիկան: Տեսական որոնումների արդյունքները դեպքերի մի ամբողջ շարքում հաստատվել են դատական վիճակագրության, սոցիոլոգիական համալիր հետազոտությունների արդյունքում:

**Հետազոտության տեսական և նորմատիվ հիմքերը.** Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել պետության և իրավունքի տեսության և պատմության, իրավական ուսմունքների պատմության, սահմանադրական իրավունքի, դատավարական իրավունքի վերաբերյալ գիտական մենագրությունները, դասագրքերը, հոդվածները, մասնավորապես հայրենական հեղինակների՝ Գ.Գ. Հարությունյանի, Գ.Ս. Ղազինյանի, Ռ.Գ Պետրոսյանի, Գ.Բ.

<sup>5</sup> Տե՛ս Դանիելյան Ե. Դատական համակարգերի տեսություն. Ժամանակակից մոտեցումներ: Սեղմագիր իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության: Երևան, 2012:

<sup>6</sup> Տե՛ս Մուկույան Ս.Տ. Դատական իշխանությունը և դրա իրականացման տեսա-իրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում:

Դանիելյանի, Գ.Մ. Բաղիրյանի, Մ.Գ. Խաչատրյանի, Ա.Ս. Ղամբարյանի և այլոց աշխատությունները:

Աշխատանքի համար որպես տեսական հիմք է հանդիսացել նաև ռուս հայտնի գիտնականների՝ Վ. Սավիցկու, Ա. Լարինի, Ի. Պետրովսիինի, Յու. Ատեցովսկու, Վ. Լեբեդևի, Մ. Մարչենկոյի, Վ. Անիշինայի, Զ. Լուսեգենովայի, Ն. Զիպուրնովայի և այլոց աշխատությունները:

Մեզանում տեղի ունեցող սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների գործընթացները ճիշտ հասկանալու համար կարևոր նշանակություն ունեն նաև արտասահմանյան գիտնականների (Պ. Արչեր, Ա. Բարակ, Վ. Բերնխեմ, Ա. Գարապոն, Դ. Զուսմեմ, Բ. Կարդոզո, Ա. Կոխ, Մ. Լանդաու, Ե. Մակվինեյ, Ռ. Պոզներ, Ս. Ռոզ-Ալկերման, Պ. Սոլովոն, Ռ. Ստրաուս, Տ. Ֆոզլետսոգ, Ֆ. Նրանկֆուրտեր, Ի. Շիխատա, Ռ. Էդվարդս, Մ. Էլլոն և այլք) հիմնարար հետազոտությունները՝ դատական իշխանության էության նրա դերի և սոցիալական նշանակության մասին:

**Աշխատանքի նորմատիվ հիմքն է՝** «Սահմանադրությունը, «Ղ դատական օրենսգիրքը, դատավարական օրենսգրքերը և այլ օրենսդրական ակտեր, ինչպես նաև միջազգային փաստաթղթերն ու ակտերը դատական իշխանության և արդարադատության վերաբերյալ:

**Հետազոտության գիտական նորույթը** որոշվում է դատական իշխանության էության, վերլուծության նկատմամբ բովանդակության, իրականացման ձևերի հանդեպ հեղինակի համալիր մոտեցումներով: Սույն աշխատանքում դատական իշխանությունը վերլուծվում է ոչ միայն որպես ինքնուրույն ու անկախ սոցիալ-քաղաքական և պետական իշխանության տարատեսակ, այլև որպես հասարակական առանձնահատուկ հարաբերությունների ամբողջություն: Դատական իշխանությունը դիտարկվում է ոչ միայն որպես դատարանի (դատական համակարգի) ինչ-ինչ գործառույթների կատարման ունակություն, այլև որպես զարգացած հասարակությանը բնորոշ հատուկ որակ, որի միջոցով լուծվում են սոցիալ-իրավական, տնտեսական և իրավական բնույթի կոնֆլիկտները:

**Գիտական նորույթի որոշակի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները.**

1. Դատական իշխանությունը որպես պետական իշխանության առանձնահատուկ տեսակ, իրենից ներկայացնում է իրավահարաբերություններ, որոնց ծագումն ու գոյությունը պայմանավորված է իրավունքի նորմի հիման վրա վեճերի լուծման բացառիկ իրավազորությամբ: Դատական իշխանության առանձնացումը՝ որպես իշխանության ինքնուրույն ճյուղի, հնարավոր է միայն իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգի առկայության պայմաններում:

2. Դատական իշխանությունն ընդհանրապես իշխանության դրսևորման մասնավոր դեպք է, այն հանրային և հենց պետական իշխանության ձևերից մեկն է: Այս կապակցությամբ դատական իշխանությունը մետաֆիզիկական և պատմական իրողություն է, ուրույն, եզակի և միևնույն ժամանակ օրինաչափորեն ծագող հասարակական հարաբերություններ, որոնց սոցիալական բնույթը

կայանում է նրանում, որ մարդկությունը, իր գործունեության ընթացքում հենվելով այնպիսի սոցիալական արժեքի վրա, ինչպիսին իրավունքն է, ունակ է միայն իրեն հայտնի միջոցների, լեզվի, խորհրդանիշների և նշանների միջոցով մոբիլիզացնել իր ներուժը սոցիալական կոնֆլիկտների արդարացի լուծման համար: Դա նրա հասարակության իրավունքն է՝ վերահսկողության միջոցով հետևել դատական որոշումների անվերապահ իրականացմանը:

3. Դատական իշխանությունը մարդու սոցիալական բնույթին բնորոշ միջոց է և զարգացած սոցիալական հանրության կենսագործունեության պայման, ինչպես նաև համընդհանուր կապի (հաղորդակցության) միջոց, որը ծագում է կազմակերպված հասարակության մեջ մարդկանց միջև սոցիալական կոնֆլիկտների արդարացի լուծման ընթացքում, խորհրդանշական միջնորդ է, որն ապահովում է պետության և քաղաքացիների փոխադարձ պարտավորությունների կատարմանը իրավունքի ուժով: Դատական իշխանությունը հասարակության այն ինստիտուցիոնալ համակարգն է, որում ծագած սոցիալական կոնֆլիկտներն իրավական լուծում են ստանում և դրանով ապահովվում է դատական իշխանության սոցիալական լեգիտիմությունը:

4. Դատական իշխանահարաբերությունների համալիրում ժողովրդի, ազգի, քաղաքացիական հասարակության առկայությունն է, որոնցում ժողովուրդը, ազգը քաղաքացիական հասարակությունը միաժամանակ և՛ օբյեկտ է, և՛ յուրահատուկ սուբյեկտ, քանի որ պետական և, հետևաբար նաև դատական իշխանության գոյությունը բացարձակապես անհնարին է ժողովրդից, ազգից, քաղաքացիական հասարակությունից դուրս, քանզի հենց դրանք են այդ իշխանության աղբյուրը: Դատարանը (դատական համակարգը) դատական իշխանության ապարատն է, հատուկ պետական հիմնարկները (ըստ էության՝ կազմակերպչա-կառուցվածքային բնույթի պետաիշխանային հարաբերությունների հատուկ ունիկալ ձև), որոնք առանձնահատուկ ձևով խթանում են պետական կառավարման գործընթացը սոցիալական կոնֆլիկտների լուծման ժամանակ: Կոնկրետ սոցիալական կոնֆլիկտ լուծելիս դատարանը, որպես պետական հաստատություն, հանդես է գալիս ոչ միայն որպես դատական իշխանության կրողի դերում, այլև հանդիսանում է արդարադատության իրականացման սուբյեկտ:

5. Դատական իշխանության գլխավոր առաքելությունն է՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ տեսակի հանրային և մասնավոր բնույթի վեճերի արդարացի լուծումը: Բացի դրանից դատական իշխանությունն օժտված է մի շարք էական հատկանիշներով՝ այն իրական է և գոյություն ունի միայն զարգացման մեջ, իր իրավասության շրջանակներում գերարկա և բացառիկ է, միաժամանակ կրում է հանրային իրավական և մասնավոր իրավական բնույթ, արտահայտվում է իրավակիրառ և իրավաստեղծ ոլորտներում, գոյություն չունի իրավական կարգավորումից դուրս, հանդիսանում է իրավունքի կենդանի աղբյուր: Դատական իշխանությանը բնութագրական է նաև դատավարական նորմերի ձևավորման հատուկ եղանակ՝ դատական նախադեպ և դրանց տրանսֆորմացիայի ապահովումը՝ դատական պրակտիկա:

6. Դատական իշխանությունը ստեղծագործության ձև է իրավունքի և

արդարադատության ոլորտում: Այս կապակցությամբ այն ոչ միայն կենդանություն է հաղորդում վերացական իրավական նորմերին և դրանով լուծում է առկա վեճերը, այլև մասնակցում է պետության ներքին գործառնությունների ապահովմանը և հասարակության բնականոն ու առաջընթաց զարգացման:

7. Դատական իշխանության երևույթը բազմապիսի է և ունի տարբեր առումներ, որոնք հանգում են հետևյալին.

➤ **դիրեկտիվ**, համաձայն որի դատական իշխանությունը հասկացվում է որպես իրական և բացառիկ իշխանություն, որն ունի նյութական բաղադրիչ արդեն այն պատճառով, որ դատական իշխանության աղբյուրը ժողովուրդն է.

➤ **տեխնոլոգիական**, որն իրենից ներկայացնում է սոցիալական գործընթացների կառավարման իրավագործություն, ինչը թույլ է տալիս իրագործել ընձեռնված պետական իշխանության հնարավորությունը կոնֆլիկտային իրավիճակների լուծման շրջանակներում,

➤ **հաղորդակցական**, դատական իշխանությունը մի լեզու է, որը հասկանալի է պետա-իրավական իշխանային հարաբերությունների բոլոր սուբյեկտներին և հանդես է գալիս որպես կենդանի իրավունք:

Այս առումով, դատական իշխանությունը օրենքի յուրահատուկ լեզու է և նրա գոյության ձև,ինչպես նաև արդարախոսության և օրինական արդարության մարմին է:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը** նրանում է, որ արդի սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների համատեքստում փորձ է արվում գիտական մենագրության մակարդակով ներկայացնել դատական իշխանության հետ կապված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները իրավական ժողովրդավարական պետության տեսանկյունից: Այս առումով աշխատանքն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գործնական նշանակություն՝ օրենսդրության կատարելագործման, դատական իշխանության մարմինների աշխատակիցների, ինչպես նաև իրավունքի տեսության և դատական իրավունքի հատուկ դասընթացների ուսումնասիրության համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը.** Ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ էլ տեղի է ունեցել աշխատանքի քննարկումը և գրախոսությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հոդվածներում, ինչպես նաև զետեղվել են Հայ-Ռուսական համալսարանի գիտական կոնֆերանսի նյութերում:

**Աշխատանքի կառուցվածքը** պայմանավորված է հետազոտության խնդիրներում և նպատակներում, այն բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք ներառում են 10 ենթագլուխներ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

### Աշխատանքի համառոտ բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի

հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

**Աշխատանքի առաջին գլուխը՝ «Դատական իշխանության որպես սոցիալական երևույթի հասկացությունը, էական հատկանիշները և նրա մասին հայեցակարգերի պատմական զարգացման հիմնական ուղենիշները»** բաղկացած է երկու ենթագլխից:

**Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Դատական իշխանության էությունը, հասկացությունը և էական հատկանիշները»** վերնագրով, հեղինակը բացահայտում է դատական իշխանության էությունը, հասկացության և էական հատկանիշների բովանդակությունը:

Հետևաբար իշխանությունը ցանկացած սոցիալական համակարգի կենսագործունեության անհրաժեշտ տարրն է և այդ կենսագործունեության պայման:

Իշխանության, այդ թվում պետական իշխանության առանձնահատուկ տեսակ է՝ դատական իշխանությունը:

Փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչ է իրենից ներկայացնում դատական իշխանությունը:

Դատական իշխանությունը մարդու սոցիալական բնույթին բնորոշ միջոց է և բարձր զարգացած սոցիալական հանրության կենսագործունեության պայման, ինչպես նաև համընդհանուր կապի (հաղորդակցության) միջոց, որը ծագում է բարձր կազմակերպված հասարակության մեջ մարդկանց միջև սոցիալական կոնֆլիկտների որոշակի կատեգորիաների լուծման ընթացքում, խորհրդանշական միջնորդ, որն ապահովում է պետության և քաղաքացիների փոխադարձ պարտավորությունների կատարումը իրավունքի նորմերի հիմքի վրա: Դատական իշխանությունը հասարակության կողմից այն սպասումների խտացումն է, որ ծագած սոցիալական կոնֆլիկտներին իրավական լուծումներ է տալիս:

Դատական իշխանությունը նաև օրենքի յուրահատուկ լեզու է՝ նրա գոյության ձև:

**Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Դատական իշխանության մասին հայեցակարգերի պատմական զարգացման հիմնական ուղենիշները»** վերտառությամբ, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկում դատական իշխանության մասին հայեցակարգերի բովանդակային առանձնահատկությունները:

Դատարանի և արդարադատության վերաբերյալ հայեցակարգերի ձևավորումը և զարգացումը երկար դարերի ուսանելի պատմություն ունի:

Մարդկության պատմությունը հուշում է, որ բոլոր հասարակարգերում էլ փորձ է արվել դատավորի համար սահմանել այնպիսի պահանջներ, որոնք հնարավորություն կտան այդ պաշտոնում տեսնել խելացի, բանիմաց, անաչառ և օրենսգետ մարդկանց:

Այսպես, ըստ հոռոմեական իրավունքի և իրավական հայեցակարգի դատարանն այն տեղն է, որտեղ լուծվում են իրավունքի հարցերը և վեճերը:

Համաշխարհային իրավագիտության պատմության մեջ իշխանությունների բաժանման տեսանկյունից դատական իշխանության սոցիալական նշանակության մասին առավել խորությամբ և փաստարկված դատողություններով աչքի է ընկնում Շ.Մոնթեսքյուն, որը իշխանությունների բաժանման հայեցակարգում դատական իշխանության որոշիչ դերակատարում է տալիս: Իսկ դատական իշխանության ժամանակակից հայեցակարգի համաձայն. ժողովրդավարական և իրավական կարող է համարվել այն պետությունը, որում կայացել է անկախ և ինքնավար դատական իշխանությունը:

**Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Դատարանը պետական իշխանության համակարգում»** վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլխից:

**Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Դատարանը որպես պետական իշխանության անկախ և ինքնուրույն մարմին»** վերնագրով, հեղինակը բացահայտում է դատական իշխանության անկախության և ինքնավարության նախադրյալները:

Դատարանի անկախությունը ժամանակակից քաղաքացիական հասարակության սահմանադրական հիմնական սկզբունքներից է: Անկախ դատական իշխանության աստվածաշնչյան գաղափարներն ու կանոններն այսօր իրենց անմիջական արտացոլումն են գտել նաև ՀՀ Սահմանադրության մեջ և դրա հիման վրա ու դրան համապատասխան ընդունված Դատական և մյուս օրենսգրքերում ու այլ նորմատիվ իրավական ակտերում:

Պետական իշխանության մարմինների համակարգում իր սոցիալական նշանակությամբ և դերակատարումով առանձնանում է դատարանը՝ որպես պետական իշխանության անկախ և ինքնուրույն մարմին:

«Դատարան» հասկացությունն ունի երկակի նշանակություն: Նախ դատարան ասելով հասկանում ենք պետական մարմին, որն օրենքով սահմանված որոշակի կանոններով գործեր քննելու միջոցով իրականացնում է արդարադատություն: Երկրորդ «դատարան» հասկացությունը նշանակում է քրեական, քաղաքացիական կամ վարչական գործը քննող դատավոր կամ դատավորների կոլեգիա և կամ, այլ կերպ ասած դատական կազմ: Այսինքն դատարանը դատական նշանակությունն իրականացնող պետական մարմին է, իսկ դատավորը հանդես է գալիս որպես դատավարության սուբյեկտ ե դատական իշխանության անմիջական կրող: Վերը նշվածից երևում է, որ դատական համակարգի տարր կամ այն կազմող հաստատություն կարող են հանդես գալ միայն որպես դատարան կազմավորված պետական մարմինները, որոնք օժտված են դատական իշխանությամբ: Այդպիսիք են միայն սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված դատարանները:

**Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Դատարանը պետական իշխանության մարմինների համակարգում»** վերնագրով, հեղինակը բազմակողմանի քննարկում է պետական իշխանության մարմինների համակարգում դատարանի տեղն ու դերը, նրա սոցիալական նշանակության հետ կապված հարցերը:

Անձի իրավունքների և շահերի իրական ապահովումը, մեր կարծիքով, հնարավոր է միայն պետական իշխանության անկախ, «հավասարակշռված», փոխհամագործակցող օրենսդիր, գործադիր և դատական մարմինների սահմանադրական երաշխավորման դեպքում:

Իշխանությունների տարանջատման գաղափարն ու հիմնահարցը ներկայումս շարունակում է արդիական մնալ ոչ միայն մեզ մոտ, այլև այլ երկրներում: Դրա հետ մեկտեղ իշխանությունների տարանջառը դիտարկվում է «սահմանադրական», «իրավական» պետության պարտադիր հատկանիշ:

Համակարգերի տեսության տեսակետից պետական իշխանության մարմինները առաջին հերթին պետք է լինեն միմյանցից անկախ, հավասարակշիռ և փոխկապակցված: Ավանդորեն դրան են հասնում «զսպիչների և հակակշիռների» յուրահատուկ մեխանիզմի շնորհիվ:

**Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Դատական իշխանության բնականոն գործունեության ապահովման երաշխիքների համակարգը»** վերտառությամբ բաղկացած է չորս ենթագլխից:

**Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Դատական իշխանության երաշխիքների էությունը և նշանակությունը»** վերնագրով, քննական վերլուծության է ենթարկվում դատական իշխանության երաշխիքների էությունը և նշանակությունը:

Ներկայումս մեզանում իրականացված սահմանադրական բարեփոխումների համատեքստում նախատեսվում է ամրապնդել դատական իշխանության անկախությունը՝ համապատասխան երաշխիքների համակարգով: Այդ երաշխիքները պետք է առավել կոնկրետացվեն նոր կամ փոփոխվող «Դատական օրենսգրքում»:

Վերլուծելով դատավորների անկախության երաշխիքներին վերաբերող միջազգային իրավական և ներպետական օրենսդրական նորմերը, կարելի է այդ երաշխիքները դասակարգել հետևյալ կերպ.

- ա) կազմակերպատիրավական,
- բ) սոցիալական,
- գ) նյութատեխնիկական,
- դ) բարոյահոգեբանական:

**Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Դատական իշխանության համընդհանուր (անդրազգային) իրավական երաշխիքները»** վերնագրով, վերլուծվում են դատական իշխանության բնականոն գործունեությունն ապահովող համընդհանուր երաշխիքների համակարգը:

Դատական իշխանության ինքնուրույն, անկախ, արդյունավետ և բնականոն գործունեության ապահովման երաշխիքների համակարգը պայմանականորեն կարելի է դասակարգել երկու ենթահամակարգերի՝ միջազգային իրավական և ներպետական իրավական: Այդ երկու համակարգերն իրենց միասնության մեջ կազմում են մեկ ամբողջություն և կարևոր նախադրյալներ են անկախ դատական իշխանության կայացման համար:

**Աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Դատական**

իշխանության ներպետական իրավական երաշխիքները» վերտառությամբ, բացահայտվում են դատական իշխանության ներպետական իրավական երաշխիքների առարկայական բովանդակությունը:

Աեզանում իրականացված սահմանադրական փոփոխությունների, բարեփոխումների հիմնական նպատակներից մեկն էլ անկախ դատական իշխանության կայացման համար համարժեք ներպետական երաշխիքների ամրագրումն է:

Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ 2015 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրությունը առավել հանգամանորեն ամրագրված է դատարանի (դատավորի) անկախության երաշխիքների համակարգը:

**Աշխատանքի երրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «Դատավորի կարգավիճակի հիմնախնդիրը դատական իշխանության երաշխիքների համատեքստում»** վերնագրով, քննարկվում է դատավորի կարգավիճակի հետ կապված հարցերը:

Դատավորները կոչված են պաշտպանելու ոչ միայն անձի իրավունքներն ու օրինական շահերը, հանես գալ որպես օրինականության և իրավակարգի ամրապնդման երաշխավորներ, այլ որոշակի հանգամանքներում նրանք պարտավոր են հանդես գալ իշխանության մյուս ճյուղերը (օրենսդիր և գործադիր) հավասարակշռող գործոնի դերում: Այս առումով առավել կարևորվում է դատավորի կարգավիճակի հետ կապված հիմնախնդիրը:

Կարելի է հավաստել, որ արդարադատությունը այնտեղ է, որտեղ ձևավորվել և գործում է իրական անկախ դատավորների կորպուսը: Այս առումով, անհրաժեշտ է արձանագրել, որ դատավորի կարգավիճակի հիմնական տարրերից են նրա անկախությունը և անփոփոխելիությունը: Դատավորի անկախությունը հիմնարար սկզբունք է դատարանների կազմակերպման և գործունեության խնդրում, որն ապահովում է պատշաճ արդարադատության իրականացումը:

Դատավորի անկախությունը նշանակում է, որ արդարադատության իրականացման ժամանակ դատավորը ղեկավարվում է սահմանադրությամբ և օրենքով, կաշկանդված չէ որևէ պետական մարմնից, հաստատությունից, պաշտոնատար անձից, հասարակական-քաղաքական կազմակերպություններից և որևէ այլ արտաքին ազդեցությունից:

**Աշխատանքի չորրորդ գլուխը՝ «Դատական իշխանության բարեփոխումները և արդարադատության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

**Չորրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Դատական իշխանության բարեփոխումները որպես անկախ, ինքնավար դատական մարմինների կայացման օբյեկտիվ անհրաժեշտություն»** վերնագրով, հեղինակը ներկայացնում է դատական իշխանության բարեփոխումների իմաստն ու բովանդակությունը:

Ազգային դատական իշխանության անկախության, անաչառության, արդարադատության արդյունավետ գործունեության, ինչպես նաև դատական մարմինների բնականոն գործառույթների իրականացման ապահովման համար,

անհրաժեշտ է ոչ միայն ամրապնդել դատական իշխանության մարմինների տեղը և դերը իշխանության համակարգում, այլև բարձրացնել հասարակության հանդեպ վստահության և հեղինակության մակարդակը, դրանով իսկ կապահովվի դատական իշխանության սոցիալական լեգիտիմությունը և ազգային իրավական համակարգի առաջընթաց զարգացումը:

**Աշխատանքի չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Դատական իշխանական գործառնությունների արդարադատության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները»** վերնագրով, հեղինակը համակողմանի քննարկում է արդարադատության արդյունավետության բարձրացման հետ կապված հիմնախնդիրները:

Հեղինակի կարծիքով արդարադատության արդյունավետությունը և առավելևս նրա չափանիշները պետք է կառուցվեն՝ ելնելով դատական իշխանության մասին օրենքով առաջադրված խնդիրներից: Որպես կանոն՝ օրենքը դատական համակարգի վրա է դնում սոցիալական կոնֆլիկտների լուծման խնդիրը: Նման տեսակի խնդիրները դատարանների կողմից կոնկրետ գործերի քննման միջոցով: Դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ, որ բացի գործերի քննումից դատական իշխանության՝ որպես սոցիալական հարաբերությունների հատուկ ձևի վրա են դրված նաև այլ խնդիրներ, հետևաբար, դատական իշխանության առջև դրված են նաև այլ նպատակներ: Դրանց հասնելուն ուղղված ոչ միայն կոնկրետ գործեր քննող դատարանների, այլև պետական ողջ մեխանիզմի, սոցիալական ու իրավական այլ շատ ինստիտուտների գործունեությունը:

**Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությունների.**

1. Դատական իշխանության և դրա կրողի՝ դատարանի հիմնական առաքելությունն է՝ հասարակության մեջ սոցիալական կոնֆլիկտների լուծումը: Մեր կողմից կատարված հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնել, որ դատական իշխանության մարմինների կողմից կոնֆլիկտների լուծումը կարող է իրականացվել ինչպես տարբեր ձևերով, այնպես էլ տարբեր եղանակներով: Ավելին՝ դատական իշխանության առջև կանգնած նպատակներին հասնելու մեթոդներն ու եղանակները կարող են բավականին հեռու լինել ավանդորեն ճանաչված արդարադատությունից: Այնուամենայնիվ, եթե կոնֆլիկտի կողմերն ընտրել են վեճի լուծման դատական եղանակը, ապա պետության շահերից ելնելով ընդհանրապես և դատական իշխանության՝ մասնավորապես, անհրաժեշտաբար բխում է ապահովել առավելագույն հնարավորը, որպեսզի յուրաքանչյուր առանձին դեպքում վերականգնվեն դատավարության բոլոր մասնակիցների խախտված իրավունքները և սոցիալական արդարությունը:

2. Դատական իշխանության գործունեության հիմք է հանդիսանում նրա բոլոր բաղադրամասերի փոխգործակցությունը, ինչը դրսևորվում է դատա-իշխանային հարաբերությունների մեջ:

Դատա-իշխանային հարաբերությունները հասարակական այն հարաբերություններն են, որոնք ծագում են իրավունքի սուբյեկտների միջև

փոխգործակցության ընթացքում առաջացող կոնֆլիկտների՝ դատարանների կողմից օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված եղանակով պետական իշխանություն իրագործելու ընթացքում:

Դատա-իշխանային հարաբերությունները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով.

1) ծագում են դատական իշխանության մարմինների (դատարանների, դատավորների) կողմից իրենց գործառնությունների իրագործման ընթացքում,

2) որպես պարտադիր սուբյեկտ՝ ունեն հատկանիշներ իշխանությունը՝ ի դեմս նրա մի կամ մի քանի կրողների՝ դատական իշխանության մարմինների, դատարանի, դատարանների, դատավորի, դատավորների,

3) միշտ հրապարակային են, քանի որ դատավարության բոլոր ձևերն իրականացվում են միայն պետության անունից,

4) հանդիսանում են իշխանության և հնազանդման հարաբերություններ և այդ իսկ պատճառով բնութագրվում են գործի մասնակիցների՝ դատարանի և կողմերի իրավաբանական անհավասարությամբ,

5) դրանց նպատակն է կոնֆլիկտների լուծումը դատարանների, դատավորների կողմից իրավունքի նորմեր կիրառելու ճանապարհով,

6) դրանք առանձնանում են դատավարական հատուկ ձևով,

7) բնութագրվում են օրինականությամբ և իրավական պաշտպանության ապահովման առանձնահատուկ իրավական ռեժիմով:

3. Առանձին դատա-իշխանային հարաբերությունների առկայության արդարադատության իրականացումն անհնար է: Կարելի է առանձնացնել արդարադատության բնորոշիչ էականակալական կողմերը.

1) Սոցիալական կոնֆլիկտների լուծումն իրականացվում է պետական իշխանության հատուկ լիազորված մարմինների՝ դատարանների (դատավորների, դատավարական կազմերի) կողմից,

2) Սոցիալական կոնֆլիկտները լուծվում են իրավունքի (ինչպես նյութական, այնպես էլ դատավարական) նորմերի հիման վրա,

3) Դատական ձևը ոչ դատական ձևերից տարբերվում է նրանով, որ տվյալ դեպքում պետությունը համաձայնվում է կողմերից յուրաքանչյուրի պահանջմունքների առավելագույնս բարելավման՝ ինքնուրույն, անկախ, կանխատեսելի վարքով դատարանի (դատավորի) առջև հիմնավորել իր կողմից ընտրած դիրքորոշման ճշտվությունը,

4) Պետությունը՝ ի դեմս դատարանի (դատավորի), ինքնուրույնաբար և հրապարակայնորեն համապարտադիր որոշում է կայացնում օգնության համար իրենց դիմած կողմերի վեճի կապակցությամբ,

5) Արդարադատություն իրականացնելով՝ պետությունը երաշխավորում է վեճի մասնակիցների, ինչպես նաև ողջ հասարակության դատական որոշման կատարումը,

6) Սոցիալական կոնֆլիկտների լուծման դատական եղանակը հնարավորություն է տալիս զերծ մնալ ուժի անտեղի կիրառումից և կամայականությունից,

7) Դատարանի առկայությունը տնտեսապես շահավետ է կողմերի համար,

քանի որ այս դեպքում կոնֆլիկտի լուծման ծախսերը զգալի աստիճանով բաշխվում են հասարակության բոլոր անդամների միջև:

4. Դատարանի հեղինակության մասին կարելի է դատել ինչպես պետական իշխանության պաշտոնական մարմինների տրված գնահատականներից, ինչպես նաև այն գնահատականներից, որոնք բխում են զանազան հասարակակալական կառույցներից ու նաև մասնագետ իրավաբաններից: Վաղուց է հայտնի, որ դատարանի հեղինակության պահպանումը հանդիսանում է գերագույն իշխանության պարտականություն: Դատական իշխանության հեղինակության ակունքները անքակտելիորեն կախված են իրավունքի զարգացման մակարդակի, կոնկրետ ժողովրդի իրավագիտակցության որակի, դատա-իրավական քաղաքականության հավասարակշռվածության, ինչպես նաև դատարանների ձևավորման կարգի, դատավորների ինքնուրույնության, անկախության, անաչառության, նրանց գործունեության օրինականության հետ:

5. Դատական իշխանությունն ունի իր սեփական կառուցակարգը, որի հիմքում ընկած են դատարանի լեգիտիմությունը, մատչելիությունը, անկախությունը, ինքնուրույնությունը, բացառիկությունը, հեղինակությունը: Հարկ է նշել, որ «դատարանի հեղինակություն», «դատական իշխանության հեղինակություն» հասկացությունները իրավագիտության մեջ շատ թույլ են մշակված:

Հեղինակի կարծիքով, դատական իշխանության հեղինակությունը պայմանավորված է մի ամբողջ շարք գործոններով: Ահա դրանցից ամենակարևորները.

1) Դատական իշխանության հեղինակության հիմքում ընկած է իրական ենթադրությունը՝ վեճերի կատեգորիաների այն ցանկը, որը գտնվում է դատական իրավասության ներքո: Որքան մեծ է տվյալ ցանկը, այնքան ավելի հեղինակավոր է դատարանը:

2) Դատական իշխանության հեղինակության մասին վկայում են դատա-իշխանային հարաբերությունների հաճախանական և քանակական ցուցանիշները: Որքան ավելի հաճախ են վեճերի մասնակիցները մտնում նճան հարաբերությունների մեջ, այնքան ավելի վստահ կարելի է դատել դրանց հեղինակության մասին:

3) Դատարանի հեղինակությունը, որքան էլ որ տարօրինակ թվա, պայմանավորված է պետության դատա-իրավական քաղաքականության կայունությամբ:

6. Պետության մեջ անկախ և ինքնավար դատական իշխանության գոյության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ առկա են նրա հիմնական աղբյուրները, նրա կրողները, իսկ բուն ինքը կատարում է իրեն բնորոշ գործառնությունները: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է մշտապես հիշել, որ դատական իշխանությունը փոխկապված է իշխանության մյուս ճյուղերի՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների հետ՝ հակակշռելով միմյանց:

Դատական իշխանության աղբյուրը նույնպես ժողովուրդն է, քանի որ միայն հասարակության մեջ հնարավոր դատա-փշխանային հարաբերությունների

ծագումն ու գոյատևումը: Քանի որ խոսքը գնում է իրավահարաբերությունների մասին, ապա դատական իշխանության գոյությունը անհնար է առանց իրավունքի զարգացած համակարգի:

7. Դատական իշխանությունը ընդհանրապես իշխանության, հատկապես պետական իշխանության տարատեսակ է: Դատական իշխանությունը իրենից ներկայացնում է հատուկ հասարակական հարաբերություններ, որոնց ծագումն ու գոյությունը պայմանավորված է սոցիումի ունակությամբ՝ անհրաժեշտության դեպքում ստեղծել կոնֆլիկտների լուծման մեխանիզմ՝ հիմնված պետության հարկադրանքի ուժով ապահովված իրավունքի նորմերի վրա:

8. Դատական իշխանությունը մարդու սոցիալական էությանը հարիր միջոց է և սոցիալական հանրության բնականոն կենսագործունեության պայման, ինչպես նաև համընդհանուր հաղորդակցության միջոց, որը ծագում է սոցիալական կոնֆլիկտների որոշակի կատեգորիաների լուծման ընթացքում, խորհրդանշական միջնորդ, որն ապահովում է պետության, հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի փոխադարձ պարտականությունների կատարումը՝ իրավունքի նորմերի համաձայն:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Դատական իշխանության հասկացությունը և հիմնական հատկանիշները //«Դատական իշխանություն», Երևան, 2009, 5-6/118-119, էջ 2-12:

2. Դատական իշխանությունը որպես սոցիալ-իրավական ինստիտուտ //«Արդարադատություն», Երևան, 2010, Նոյեմբեր, № 3(4), էջ 7-19:

3. Դատավորի կարգավիճակի հիմնախնդիրների շուրջ //«Օրինականություն», Երևան, 2010, N 58, էջ 39-41:

4. Դատական իշխանության երաշխիքների էությունը և նշանակությունը //«Դատական իշխանություն», Երևան, 2015, 11-12/197-198, էջ 18-25:

5. Դատարանը՝ որպես պետական իշխանության անկախ և ինքնուրույն մարմին //«Դատական իշխանություն», Երևան, 2016, 1/199, էջ 2-11:

6. Դատական իշխանության բարեփոխումները որպես անկախ և ինքնավար դատական մարմինների համակարգի օբյեկտիվ անհրաժեշտություն //Դատական իշխանության, Երևան, 2016, 2-3 (200-201), էջ 2-9:

данян Гагик Рафикович

Судебная власть как социально правовой институт

(общетеоретический анализ)

## РЕЗЮМЕ

Актуальность исследования настоящей диссертационной работы обусловлена, прежде всего, теоретическим анализом имеющихся в нашем обществе проблем, связанных с системой судебной власти, в контексте конституционных и процессуальных реформ, и разработке научно обоснованных предложений для нахождения равноценных способов их решения.

Кроме того, научное исследование проблем судебной власти в определенной мере способствует становлению системы органов независимой и автономной судебной власти.

Целью настоящего исследования является комплексное изучение актуальных вопросов теоретико-правового неотложного характера, связанных с системой судебной власти, а также обоснование необходимости обновления понятийно-научного аппарата, касающегося судебной власти в теории государства и права, предоставление рекомендаций, направленных на совершенствование функций органов системы судебной власти. Новизна настоящей диссертационной работы определяется выдвиганием новых авторских подходов к сути судебной власти, формам ее осуществления.

В связи с этим в данной работе судебная власть представляется не только как своеобразный целостный институт независимой и автономной социально-правовой и государственной власти, но и как институт своеобразных государственно-правовых и общественно-политических отношений, основными функциональными полномочиями которого являются: осуществление правосудия (решение социально-правовых споров в установленном порядке и по установленной процедуре), преодоление правовых противоречий и решение

вопросов, касающихся правовых пробелов благодаря правотворческой деятельности, а также обеспечение естественного общественного развития в рамках своей сферы деятельности. В связи с этим судебная власть приобретает значительное социальное значение и авторитет (социальную легитимность) в системе разделения и уравнивания ветвей власти.

В настоящей работе судебная власть рассматривается как структурный порядок (механизм), наделенный свойственными социально-психологическому характеру человека властными полномочиями, который призван преимущественно решать вопросы дифференциации социальных конфликтов и обеспечить исполнение взаимных обязанностей государства и граждан в силу закона. В связи с этим судебная власть - та институциональная составляющая общественно-политической и правовой системы, посредством которой социальные споры получают правовое решение, и этим дифференцируется ее существование и социально-правовая легитимность.

Кроме того, судебная власть как институциональная система своими функциональными полномочиями не только "вселяет жизнь" в абстрактные правовые нормы и является "живым посредником" между обществом и правом, но и принимает действенное участие в обеспечении осуществления функций государства, защиты прав и свобод человека, однотипного применения и развития закона.

В этой связи судебная власть - своеобразный язык выражения закона (права) и форма его существования, поприще правдивости и гарантия правозаконности.

Настоящая диссертационная работа имеет научно-теоретическое, а также практическое и прикладное значение для правотворческой, правоприменительной, правоохранительной деятельности и для учебного процесса подготовки и переподготовки юридических кадров.

Результаты исследования были опубликованы в ряде научных статей и научно-практических докладов автора.

Khandanyan Gagik Rafik  
Judicial power as a socio-legal institution  
(general theoretical analysis)

Summary

First of all, the actuality of the research of the given thesis is conditioned by the necessity to theoretically analyze the existing problems related to judicial power in the context of constitutional and judicial legal reforms took place nowadays and to develop scientifically grounded suggestions for their equivalent solutions.

Besides, scientific research of problems related to judicial power will certainly promote the formation of independent and autonomous system of judicial bodies.

The objective of this research is to comparatively study actual urgent issues concerning the system of judicial power, as well as to ground the necessity of renewal of conceptual-scientific future in regard with judicial power, and to introduce suggestions aimed at accomplishment of functions of bodies of judiciary system.

The scientific novelty of this thesis is determined by introduction of authorial new approaches towards the essence of judicial power and the forms of its implementation. In this regard, in the thesis the judicial power is presented not only as a type of independent and autonomous social-legal and state power, but also complete uniform institution (establishment) of state legal and societal-political original and unique relations, and its main functional powers are administration of justice (solution of socio-legal disputes in a manner and

procedure prescribed by law), overcoming legal conflicts and solutions of legal gaps due to law-making activity, as well as provision of regular development of society within the field of its activity. In this respect, the judicial power gets a vital social significance and reputation (social legitimacy) in the system of separation and balance of powers.

In this work the judicial power is considered as a mechanism endowed with state powers typical to socio-psychological nature of a person, which is aimed at fair solution of social conflicts and assurance of mutual fulfillment of obligations of state and citizens by the virtue of law. In this regard, the judicial power is the institutional component of political and legal system of society, through which the social disputes are legally solved, and by which its existence and social legal legitimacy are justified.

Furthermore, as an institutional system, the judicial power by its functional powers not only gives a "liveliness" to abstract legal norms and is considered a "alive mediator" between society and law, but is also actively involved in the process of assurance of performance of the state functions, protection of human rights and freedoms, unified implementation of law and development of law. In this regard, the judicial power is a specific language of manifestation of law and a form of its existence, a platform for fair talking and a guarantee of legality.

This thesis has a scientific theoretical and practical significance for law-making, law enforcement and law-keeping activity and for corresponding study courses.

The results of the research have been published in several scientific articles and scientific practical reports of the author.



ՀՀ Ազգային գրադարան



NL0776609

